

Պ-866-15.02.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Գույքի սեփականատեր չհանդիսացող անձի այլ գույքային իրավունքների պետական գրանցումը՝ բացառությամբ հիփոթեքի պետական գրանցման, ուժը կորցրած ճանաչելու հիմք են օրենքով նման իրավունքի դադարման համար նախատեսված հիմքերը հաստատող փաստաթղթերը, ընդ որում՝

1) պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետը ավարտվելուց հետո պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա ուժը կորցրած է ճանաչվում, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված չէ, որ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով.

2) եթե օրենքով նախատեսված է պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը վերսկսելու հնարավորություն, ապա պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը ուժը կորցրած է ճանաչվում պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում կողմերից որևէ մեկի ներկայացրած դիմումի հիման վրա:

3) պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, այդ թվում՝ սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված 15 աշխատանքային օրվա ընթացքում դիմում չներկայացնելու դեպքում, կարող է ուժը կորցրած ճանաչվել՝

ա. պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնագրի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումով,

բ. պայմանագրի կողմերի համատեղ դիմումի հիման վրա.

գ. օրենքով կամ պայմանագրով նախատեսված՝ պայմանագրից հրաժարվելու պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումով,

դ. դատական ակտի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումով կամ շահագրգիռ անձի կամ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի ներկայացմամբ,

ե. եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված է որոշակի իրադարձությունների վրա հասնելու պայմաններում պայմանագրի գործողության դադարեցում, ապա այդ փաստը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումով.

4) օրենքի ուժով, դատական կամ այլ իրավական ակտի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել այդ իրավունքի դադարման համար օրենքով սահմանված հիմքերով՝ այդ հիմքերը հաստատող փաստաթղթերի հիման վրա.

5) վարձակալության պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետն ավարտելու հիմքով առանց կողմերից որևէ մեկի դիմումի դադարեցվում է օրենքի ուժով:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով.

«5. Սույն հոդվածի իմաստով օրենքով նախատեսված պատշաճ ծանուցում է համարվում այն ծանուցումը, որը կատարվել է պատվիրված նամակով,իսկ դրա անհնարինության դեպքում՝ օրենքով սահմանված հրապարակային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցումը տեղադրելու միջոցով, որի դեպքում 15-րդ օրն անձը համարվում է ծանուցված:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով սահմանված պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթ է համարվում՝

1) պատվիրված նամակով ծանուցման դեպքում՝ ծանուցման պատճենը եւ ծանուցումը հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը.

2) օրենքով սահմանված հրապարակային եղանակով ծանուցման դեպքում՝ պատվիրված նամակի հետադարձ ծանուցումը եւ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցումը տեղադրելու քաղվածքը:

Սույն հոդվածի ծանուցման նկատմամբ չեն տարածվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330.1-ին հոդվածի 5-րդ մասի դրույթները:

7. Սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված մերժման հիմքերից բացի՝ իրավունքի դադարման պետական գրանցումը մերժվում է նաեւ, եթե իրավունքի դադարման պետական գրանցման դիմումը ներկայացնելու պահին չի լրացել օրենքով կամ պայմանագրով նախատեսված ծանուցման ժամկետը:»:

Հոդված 3. Օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3) օրենքի ուժով դադարող իրավունքի պետական գրանցման համար վճար չի գանձվում:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է այդ իրավունքի սուբյեկտների միջև այնպիսի պայմանագրերի կնքման հնարավորություն, որոնց պայմանների համաձայն պայմանագրի գործողությունը կարող է դադարել կամ այն կարող է չվերսկսվել այդ պայմանագրի կողմերից միայն մեկի կամարտահայտման արդյունքում:

Օրինակ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի «Նոր ժամկետով վարձակալության պայմանագիր կնքելը» վերտառությամբ 624-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատրուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով:*

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի «Վարձակալության պայմանագրի ժամկետը» վերտառությամբ 612-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *եթե վարձակալության ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրը կնքված է համարվում անորոշ ժամկետով: Այդ դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու վարձակալության պայմանագրից, այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Անորոշ ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը դադարեցնելու համար օրենքով կամ պայմանագրով կարող է սահմանվել տեղեկացման այլ ժամկետ:*

Վերոգրյալից բխում է, որ այն դեպքում, երբ որոշակի ժամկետով կնքված վարձակալության պայմանագրի ժամկետը ավարտվել է, և պայմանագրի կողմերը իրենց երկուստեք գործողություններով ցույց են տալիս, որ չունեն առարկություններ, ապա կողմերի միջև կնքված վարձակալության պայմանագիրը ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով անորոշ ժամկետով:

Անորոշ ժամկետով կնքված վարձակալության պայմանագրի յուրաքանչյուր կողմ կարող է իրացնել իր սուբյեկտիվ իրավունքը և հրաժարվել վարձակալության պայմանագրից՝ այդ մասին մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով մյուս կողմին:

Հետևաբար վարձակալության պայմանագրի կողմերից յուրաքանչյուրի կողմից պայմանագրից հրաժարվելու ցանկության մասին օրենքով սահմանված ժամկետում տեղեկացնելուց և այդ ժամկետի ավարտից հետո պայմանագիրը համարվում է դադարած օրենքի ուժով:

Միևնույն ժամանակ գույքի նկատմամբ իրավունքների ծագման և դրանց դադարման հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորող գործող օրենսդրությունը հնարավորություն չի տալիս մի անձի կամաարտահայտման արդյունքում ուժը կորցրած ճանաչել անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի պետական գրանցումը: Այսինքն առկա է իրավիճակ, երբ ընթացակարգային կանոնները գործնականում անհնար են դարձնում երաշխավորված նյութական իրավունքի իրացումը:

Մասնավորապես՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Գույքի սեփականատերը չհանդիսացող անձի այլ գույքային իրավունքների պետական գրանցումը ուժը կորցրած ճանաչելու հիմք են օրենքով նման իրավունքի դադարման համար նախատեսված հանգամանքները հաստատող փաստաթղթերը, ընդ որում՝ 1) պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո ուժը կորցրած է ճանաչվում պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված է, որ*

տվյալ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունները դադարում են, իսկ եթե գույքային իրավունքի ձեռք բերման համար հիմք հանդիսացած պայմանագրով կամ օրենքով պայմանագրի ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունների դադարման վերաբերյալ պայման սահմանված չէ, ապա նման պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագրի հիման վրա իրականացված իրավունքի պետական գրանցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել պայմանագրի կողմերի համատեղ դիմումի, պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնագրի կամ դատական ակտի հիման վրա:

Վերը ներկայացված հոդվածից բխում է, որ եթե պայմանագրի ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունները չեն դադարում, ապա պայմանագրի հիման վրա իրականացված իրավունքի պետական գրանցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել 1) պայմանագրի կողմերի համատեղ դիմումի, 2) պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնագրի կամ 3) դատական ակտի հիման վրա:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման մասին» ՀՀ օրենքի հիշյալ դրույթն ակնհայտորեն հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածին՝ վարձակալության պայմանագրի կողմերին զրկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածով իրենց տրված իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունից: Ինչից հետո այն է, որ անորոշ ժամկետով կնքված վարձակալության պայմանագրի կողմերից, օրինակ, վարձատուին, ըստ էության, չի կարող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածով սահմանված կարգով ընդամենը երեք ամիս առաջ տեղեկացնելով վարձակալին պայմանագրից հրաժարվելու ցանկության մասին՝ լիարժեքորեն դադարեցնել կնքված վարձակալության պայմանագիրը, քանի որ անհրաժեշտ է նաև ուժը կորցրած ճանաչել պայմանագրի հիման վրա իրականացված իրավունքի պետական գրանցումը: Իսկ իրավունքի պետական գրանցումը ուժը կորցրած ճանաչելու համար անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրի կողմերի համատեղ դիմում կամ պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնագիր, ինչից բխում է, որ անհրաժեշտ է մյուս կողմի համաձայնությունը կամ

առնվազն ցանկությունը համատեղ դիմումի ներկայացման համար, ինչը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածով վարձակալին և վարձատուին տրված իրավունքին այն է՝ **միակողմանի** դադարեցնել պայմանագիրը: Անորոշ ժամկետով կնքված վարձակալության պայմանագրի դեպքում գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել նաև դատական ակտի հիման վրա, ինչից բխում է, որ գույքի սեփականատերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածով իրեն վերապահված՝ սահմանված ժամկետում վարձակալին նախապես ծանուցելով պայմանագիրը միակողմանի դադարեցնելու իրավունքից չի կարողանում օգտվել լիարժեքորեն, և ստիպված է սեփական գույքն իրեն վերադարձնելու համար ընկնել դատական քաջքշուքների մեջ, ինչն էլ, իր հերթին, ավելացնում է դատարանների ծանրաբեռնվածությունը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի՝ *գույքի անհատույց օգտագործման պայմանագրի նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են սույն օրենսգրքի 608 հոդվածով, 612 հոդվածի 1-ին կետով և 2-րդ կետի առաջին պարբերությամբ, 617 հոդվածով, 624 հոդվածի 2-րդ կետով, 626 հոդվածի 1-ին և 3-րդ կետերով սահմանված կանոնները:*

Վերոգրյալից բխում է, որ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի նկատմամբ ևս կիրառվում են 612-րդ և 624-րդ հոդվածների կարգավորումները, և հաշվի առնելով այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 687-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, հիշյալ պայմանագրի կողմերի համար պայմանագրի հիման վրա իրականացված իրավունքի պետական գրանցումը ուժը կորցրած ճանաչելու տեսանկյունից նույնպես առաջանում են նույն խնդիրները, ինչ վարձակալության պայմանագրի կողմերի համար:

Վերոգրյալից զատ առկա է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը գործողության ժամկետը չավարտված պայմանագրերի հիման վրա կատարված պետական գրանցման ուժը կորցրած ճանաչելու նոր հիմքերով լրացնելու անհրաժեշտություն, ինչը նույնպես

պայմանավորված է երաշխավորված նյութական իրավունքի իրացումն ապահովելու հրամայականով:

2. Կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է փոփոխել և լրացնել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչի արդյունքում պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել այդ իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից.

1. պայմանագրի որևէ կողմի դիմումի հիման վրա, եթե պայմանագրի գործողության ժամկետը ավարտվելուց հետո օրենքով կամ պայմանագրով նախատեսված չէ, որ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը համապատասխան պայմանների պահպանված լինելու դեպքում ճանաչվում է վերսկսված.

2. եթե պայմանագրի գործողության ժամկետը ավարտվելուց հետո օրենքով կամ պայմանագրով չնայած նախատեսված է, որ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը համապատասխան պայմանների պահպանված լինելու դեպքում ճանաչվում է վերսկսված, սակայն պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում այդ պայմանագրի կողմերից որևէ մեկի կողմից ներկայացվել է դիմում.

3. պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա օրենքով կամ պայմանագրով նախատեսված՝ պայմանագրից հրաժարվելու ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է երաշխավորված նյութական իրավունքի գործնականում իրացնելու ապահովում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի՝ 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Գույքի սեփականատեր չհանդիսացող անձի այլ գույքային իրավունքների պետական գրանցումը՝ բացառությամբ հիփոթեքի պետական գրանցման, ուժը կորցրած ճանաչելու հիմք են օրենքով նման իրավունքի դադարման համար նախատեսված հիմքերը հաստատող փաստաթղթերը, ընդ որում՝

1) պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետը ավարտվելուց հետո պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա ուժը կորցրած է ճանաչվում, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված չէ, որ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով.

2) եթե օրենքով նախատեսված է պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը վերսկսելու հնարավորություն, ապա պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը ուժը կորցրած է ճանաչվում պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում կողմերից որևէ մեկի ներկայացրած դիմումի հիման վրա:

~~ա. եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված է, որ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով, ապա պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը ուժը կորցրած է ճանաչվում պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում կողմերից որեւէ մեկի ներկայացրած դիմումի հիման վրա:~~

~~3) պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, այդ թվում՝ սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված 15 աշխատանքային օրվա ընթացքում դիմում չներկայացնելու դեպքում, կարող է ուժը կորցրած ճանաչվել՝~~

~~2) պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, այդ թվում՝ օրենքի կամ պայմանագրի ուժով անորոշ ժամկետով կնքված պայմանագրի, կարող է ուժը կորցրած ճանաչվել՝~~

ա. պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնագրի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որեւէ մեկի դիմումով,

բ. պայմանագրի կողմերի համատեղ դիմումի հիման վրա.

գ. օրենքով կամ պայմանագրով նախատեսված՝ պայմանագրից հրաժարվելու պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որեւէ մեկի դիմումով,

դ. դատական ակտի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որեւէ մեկի դիմումով կամ շահագրգիռ անձի կամ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի ներկայացմամբ,

ե. եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված է որոշակի իրադարձությունների վրա հասնելու պայմաններում պայմանագրի գործողության դադարեցում, ապա այդ փաստը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումով.

~~ե. — օրենքով — կամ — պայմանագրով — նախատեսված — դեպքում — որոշակի իրադարձությունների — վրա — հասնելու — պայմաններում — պայմանագրի — գործողության անհնարինությունը — նախատեսող — փաստը — հաստատող — փաստաթղթի — հիման — վրա՝ պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումով.~~

4) 3) օրենքի ուժով, դատական կամ այլ իրավական ակտի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել այդ նման իրավունքի դադարման համար օրենքով սահմանված հիմքերով՝ այդ հիմքերը հաստատող փաստաթղթերի հիման վրա.

5) 4) վարձակալության պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետն ավարտելու հիմքով առանց կողմերից որևէ մեկի դիմումի դադարեցվում է օրենքի ուժով:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով.

«5. Սույն հոդվածի իմաստով օրենքով նախատեսված պատշաճ ծանուցում է համարվում այն ծանուցումը, որը կատարվել է ~~առձեռն — փոխանցմամբ — կամ~~ պատվիրված նամակով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ օրենքով սահմանված հրապարակային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցումը տեղադրելու միջոցով, որի դեպքում 15-րդ օրն անձը համարվում է ծանուցված:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով սահմանված պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթ է համարվում՝

~~1) առձեռն փոխանցմամբ ծանուցման դեպքում՝ ծանուցվողի ստորագրությամբ կատարված նշումով ծանուցման պատճենը:~~

1) 2) պատվիրված նամակով ծանուցման դեպքում՝ ծանուցման պատճենը եւ ծանուցումը հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը:

2) 3) օրենքով սահմանված հրապարակային եղանակով ծանուցման դեպքում՝ պատվիրված նամակի հետադարձ ծանուցումը եւ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցումը տեղադրելու քաղվածքը:

Սույն հոդվածի ծանուցման նկատմամբ չեն տարածվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330.1-ին հոդվածի 5-րդ մասի դրույթները:

7. Սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված մերժման հիմքերից բացի՝ իրավունքի դադարման պետական գրանցումը մերժվում է նաեւ, եթե իրավունքի դադարման պետական գրանցման դիմումը ներկայացնելու պահին չի լրացել օրենքով կամ պայմանագրով նախատեսված ծանուցման ժամկետը:»:

Հոդված 3. Օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3) օրենքի ուժով դադարող իրավունքի պետական գրանցման համար վճար չի գանձվում:»:

Հոդված 4 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-866-

15.02.2021-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին մասին Ա ենթակետը և 2-րդ կետն առաջարկվել է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) եթե օրենքով նախատեսված է պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը վերսկսելու հնարավորություն, ապա պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը ուժը	Ընդունվել է խմբագրվել է: Մասնավորապես 10 աշխատանքային օրը հեղինակի կողմից առաջարկվել է փոխարինել 15 աշխատանքային օրով: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			կորցրած է ճանաչվում պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում կողմերից որևէ մեկի ներկայացրած դիմումի հիման վրա 3) պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, այդ թվում՝ սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմում չներկայացնելու դեպքում, կարող է ուժը կորցրած ճանաչվել՝»:		
2.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասն 3-րդ կետի ա-դ ենթակետերում նշված դեպքերն առաջարկվել է լրացնել նոր Ե ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ե. եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված է որոշակի իրադարձությունների վրա հասնելու պայմաններում պայմանագրի գործողության դադարեցում, ապա այդ փաստը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումով		
3.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի «3)», «4)» կետերի համարակալումը համապատասխանաբար փոխել՝ «4)», «5)»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ (նախորդ առաջարկության ընդունման դեպքում 4-րդ) կետում առաջարկվել է «նման» բառը փոխարինել «այդ» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
5.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածում լրացվող 7-րդ մասի կարգավորումն առաջարկվել է	Չի ընդունվել :	Չի ընդունվել :

			նախատեսել նույն օրենքի 30-րդ հոդվածում՝ որպես իրավունքի պետական գրանցման մերժման հիմք:		
6.	ՀՀ Կառավարություն	Նախագծի հոդված 2-րդ	Նախագծի 2-րդ հոդվածի համարակալումն առաջարկվել է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին:	Չի ընդունվել :	Չի ընդունվել :
7.	Պատգամավոր Արթուր Դավթյան	Նախագծի հոդված 2-րդ	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվող պատշաճ ծանուցման տեսակներից հանել առձեռն փոխանցման հնարավորությունը և համապատասխանաբար պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթղթերի շարքից հանել առձեռն փոխանցմամբ ծանուցման դեպքում՝ ծանուցվողի ստորագրությամբ կատարված նշումով ծանուցման պատճենը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: